

**Տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի և այլ երկնային
մարմինների հետազոտման ու օգտագործման ոլորտում
պետությունների գործունեությունը կարգավորող սկզբունքների մասին
Պայմանագիր¹**

Սույն Պայմանագրի Կողմ պետությունները,

ոգեշնչված լինելով տիեզերական տարածություն մարդու մուտք գործելու արդյունքում մարդկության առջև բացվող մեծ հեռանկարներով,

գիտակցելով համայն մարդկության ընդհանուր շահը խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման ու օգտագործման ոլորտում առաջընթացի հարցում,

հավատացած լինելով, որ տիեզերական տարածությունը պետք է հետազոտվի ու օգտագործվի հոգուտ բոլոր ժողովուրդների՝ անկախ նրանց տնտեսական կամ գիտական զարգացման մակարդակից,

ցանկանալով նպաստել խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման հետ կապված՝ գիտական, ինչպես նաև իրավական հարցերում լայն միջազգային համագործակցությանը,

հավատացած լինելով, որ այդպիսի համագործակցությունը կնպաստի պետությունների և ժողովուրդների միջև փոխըմբռնման ձևավորմանն ու բարեկամական հարաբերությունների ամրապնդմանը,

վկայակոչելով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 1963 թվականի դեկտեմբերի 13-ին միաձայն ընդունված՝ «Տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում պետությունների գործունեությունը կարգավորող իրավական սկզբունքների հռչակագիր» վերնագրով 1962 (XVIII) բանաձևը,

վկայակոչելով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 1963 թվականի հոկտեմբերի 17-ին միաձայն ընդունված 1884 (XVIII) բանաձևը, որով պետություններին կոչ է արվում զերծ մնալ Երկրի ուղեծրում միջուկային զենք կամ զանգվածային ոչնչացման ցանկացած այլ տեսակի զենք պարունակող որևէ օբյեկտ տեղակայելուց կամ երկնային մարմինների վրա այդպիսի զենք տեղադրելուց,

հաշվի առնելով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի՝ 1947 թվականի նոյեմբերի 3-ի 110 (II) բանաձևը, որով դատապարտվում է այն քարոզչությունը, որը նախատեսված է խաղաղությանը սպառնացող վտանգի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի դրսևորման հանգեցնելու կամ դա

¹ Ընդունվել է Գլխավոր ասամբլեայի կողմից 1966 թվականի դեկտեմբերի 19-ի բանաձևում:

խրախուսելու համար, կամ որը հավանաբար կնպաստի դրան, և նկատի ունենալով, որ վերոհիշյալ բանաձևը կիրառելի է տիեզերական տարածության պարագայում,

համոզված լինելով, որ «Տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի և այլ երկնային մարմինների հետազոտման ու օգտագործման ոլորտում պետությունների գործունեությունը կարգավորող սկզբունքների մասին» պայմանագրով առաջ կմղվեն Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության նպատակներն ու սկզբունքները,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված I

Տիեզերական տարածությունը, այդ թվում՝ Լուսինը և այլ երկնային մարմինները, հետազոտվում ու օգտագործվում են հօգուտ և ի շահ բոլոր երկրների՝ անկախ դրանց գիտական կամ տնտեսական զարգացման մակարդակից, և այդ գործառույթները վերապահվում են ամբողջ մարդկությանը:

Տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի և այլ երկնային մարմինների հետազոտման ու օգտագործման հնարավորություն, առանց որևէ խտրականության, հավասարության սկզբունքի հիման վրա և միջազգային իրավունքին համապատասխան, պետք է ունենան բոլոր պետությունները, ինչպես նաև երկնային մարմինների բոլոր տարածքները պետք է ազատորեն լինեն հասանելի:

Պետք է լինի տիեզերական տարածությունում, այդ թվում՝ Լուսնի և այլ երկնային մարմինների վրա գիտական հետազոտություններ իրականացնելու ազատություն, և պետությունները պետք է խթանեն ու խրախուսեն միջազգային համագործակցությունն այդպիսի հետազոտությունների ոլորտում:

Հոդված II

Տիեզերական տարածությունը, այդ թվում՝ Լուսինը և այլ երկնային մարմիններ, ենթակա չեն պետությունների կողմից յուրացման՝ ո՛չ ինքնիշխանություն հռչակելու, ո՛չ դրանք օգտագործելու կամ զավթելու, ո՛չ էլ որևէ այլ միջոցով:

Հոդված III

Պայմանագրի Կողմ պետություններն իրականացնում են տիեզերական տարածությունը, ներառյալ Լուսինը և այլ երկնային մարմինները, հետազոտելու և օգտագործելու գործունեություն՝ համաձայն միջազգային իրավունքի, ներառյալ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը, միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու և միջազգային համագործակցությունն ու փոխըմբռնումը խթանելու նպատակով:

Հոդված IV

Պայմանագրի Կողմ պետությունները պարտավորվում են Երկրի ուղեծրում չտեղակայել միջուկային զենք կամ զանգվածային ոչնչացման որևէ այլ տեսակի զենք պարունակող որևէ օբյեկտ, երկնային մարմինների վրա չտեղադրել այդպիսի զենք կամ տիեզերական տարածությունում որևէ այլ կերպ չտեղավորել այդպիսի զենք:

Պայմանագրի Կողմ բոլոր պետություններն օգտագործում են Լուսինը և մյուս երկնային մարմինները բացառապես խաղաղ նպատակներով: Երկնային մարմինների վրա ռազմական բազաների, օբյեկտների և ամրաշինությունների ստեղծումը, ցանկացած տեսակի զենքի փորձարկումն ու ռազմական զորախաղերի անցկացումն արգելվում է: Գիտական հետազոտությունների համար կամ ցանկացած այլ խաղաղ նպատակով զինվորական անձնակազմի օգտագործումը չի արգելվում: Լուսնի և այլ երկնային մարմինների խաղաղ հետազոտման համար անհրաժեշտ ցանկացած սարքավորման կամ հարմարության օգտագործումը նույնպես չի արգելվում:

Հոդված V

Պայմանագրի Կողմ պետությունները տիեզերագնացներին համարում են տիեզերական տարածությունում մարդկության պատվիրակներ և նրանց տրամադրում են ցանկացած հնարավոր աջակցություն վթարի, աղետի կամ Պայմանագրի Կողմ մեկ այլ պետության տարածքում կամ միջազգային ջրերում արտակարգ վայրէջքի դեպքում: Այդպիսի վայրէջք կատարելու դեպքում տիեզերագնացներն անվտանգ և անհապաղ վերադարձվում են այն պետություն, որի գրանցամատյանում գրանցված է նրանց տիեզերական ապարատը:

Կողմ պետություններից մեկի տիեզերագնացները տիեզերական տարածությունում և երկնային մարմինների վրա գործունեություն իրականացնելիս պետք է Կողմ հանդիսացող մյուս պետությունների տիեզերագնացներին տրամադրեն ցանկացած հնարավոր աջակցություն:

Պայմանագրի Կողմ պետություններն անհապաղ տեղեկացնում են Պայմանագրի Կողմ մյուս պետություններին կամ Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին տիեզերական տարածությունում, այդ թվում՝ Լուսնի և այլ երկնային մարմինների վրա իրենց բացահայտած ցանկացած երևույթի մասին, որը կարող է վտանգավոր լինել տիեզերագնացների կյանքի կամ առողջության համար:

Հոդված VI

Պայմանագրի Կողմ պետությունները միջազգային պատասխանատվություն են կրում տիեզերական տարածությունում, այդ թվում՝ Լուսնի և այլ երկնային մարմինների վրա պետական մակարդակով գործունեություն իրականացնելու համար՝ անկախ այն հանգամանքից՝ այդ գործունեությունն իրականացնում են պետական մարմինները, թե ոչ պետական կազմակերպությունները, ինչպես նաև՝ երաշխավորելու համար, որ

պետական մակարդակով իրականացվող գործունեությունը համապատասխանում է սույն Պայմանագրի դրույթներին: Տիեզերական տարածությունում, այդ թվում՝ Լուսնի և այլ երկնային մարմինների վրա ոչ պետական կազմակերպությունների գործունեության համար պետք է պահանջվի թույլտվություն և շարունակական վերահսկողություն Պայմանագրի Կողմ համապատասխան պետության կողմից: Միջազգային կազմակերպության կողմից տիեզերական տարածությունում, այդ թվում՝ Լուսնի և այլ երկնային մարմինների վրա գործունեություն իրականացնվելու դեպքում սույն Պայմանագրի դրույթների հետ համապատասխանություն ապահովելու պատասխանատվությունը կրում են ինչպես միջազգային կազմակերպությունը, այնպես էլ այդ կազմակերպության աշխատանքներին մասնակցող՝ Պայմանագրի Կողմ պետությունները:

Հոդված VII

Պայմանագրի Կողմ յուրաքանչյուր պետություն, որը տիեզերական տարածություն, այդ թվում՝ դեպի Լուսին և այլ երկնային մարմիններ օբյեկտ է արձակում կամ ապահովում է դրա արձակումը, և Կողմ հանդիսացող յուրաքանչյուր պետություն, որի տարածքից կամ կայանից արձակվում է օբյեկտը, միջազգային մակարդակով պատասխանատվություն է կրում Պայմանագրի Կողմ մեկ այլ պետության կամ նրա ֆիզիկական կամ իրավաբանական անձանց՝ այդպիսի օբյեկտի կամ դրա բաղկացուցիչ մասի հետևանքով Երկրի վրա, օդային տարածքում կամ տիեզերական տարածությունում, այդ թվում՝ Լուսնի և այլ երկնային մարմինների վրա պատճառած վնասի համար:

Հոդված VIII

Պայմանագրի Կողմ այն պետությունը, որի գրանցամատյանում գրանցված է տիեզերական տարածություն արձակված օբյեկտը, տիեզերական տարածությունում կամ երկնային մարմնի վրա գտնվելու ընթացքում պահպանում է այդ օբյեկտի և դրա վրա գտնվող անձնակազմի նկատմամբ իրավազորությունը և վերահսկողությունը: Տիեզերական տարածություն արձակված օբյեկտների, այդ թվում՝ երկնային մարմնի վրա վայրէջք կատարած կամ դրա վրա կառուցված օբյեկտների կամ այդ օբյեկտների բաղկացուցիչ մասերի նկատմամբ սեփականության իրավունքի վրա չի ազդում տիեզերական տարածությունում կամ երկնային մարմնի վրա դրանց գտնվելու կամ Երկիր վերադառնալու հանգամանքը: Այդպիսի օբյեկտները կամ դրանց բաղկացուցիչ մասերը, որոնք հայտնաբերվել են Պայմանագրի Կողմ այն պետության սահմաններից դուրս, որի գրանցամատյանում դրանք գրանցված են, վերադարձվում են Կողմ հանդիսացող այդ պետությանը, որը, ըստ պահանջի, պետք է տրամադրի նույնականացնող տվյալներ նախքան դրանք վերադարձնելը:

Հոդված IX

Տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի և այլ երկնային մարմինների հետազոտման ու օգտագործման ոլորտում Պայմանագրի Կողմ պետություններն առաջնորդվում են համագործակցության ու փոխօգնության սկզբունքով և տիեզերական տարածությունում, այդ թվում՝ Լուսնի և երկնային մարմինների վրա իրենց ամբողջ գործունեությունը ծավալում են՝ պատշաճ կերպով հաշվի առնելով Պայմանագրի Կողմ բոլոր մյուս պետությունների համապատասխան շահերը: Պայմանագրի Կողմ պետությունները զբաղվում են տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի և այլ երկնային մարմինների ուսումնասիրությամբ և իրականացնում են դրանց հետազոտություն այնպես, որ խուսափեն դրանց վնասակար աղտոտումից, ինչպես նաև արտերկրային ծագում ունեցող նյութ ներմուծելու հետևանքով Երկրի շրջակա միջավայրում բացասական փոփոխություններից, և անհրաժեշտության դեպքում այդ նպատակով համապատասխան միջոցներ են ձեռնարկում: Եթե Պայմանագրի Կողմ որևէ պետություն պատճառ ունի կարծելու, որ տիեզերական տարածությունում, այդ թվում՝ Լուսնի և այլ երկնային մարմինների վրա իր կամ իր քաղաքացիների կողմից ծրագրված գործունեությունը կամ փորձը հնարավոր վնասակար խոչընդոտներ կստեղծի այլ Կողմ պետությունների՝ տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի և այլ երկնային մարմինների խաղաղ հետազոտման ու օգտագործման հետ կապված գործունեության համար, ապա այդ պետությունը, մինչև այդպիսի գործունեությանը կամ փորձին ընթացք տալը, նախաձեռնում է համապատասխան միջազգային խորհրդակցություններ:

Եթե Պայմանագրի Կողմ որևէ պետություն պատճառ ունի կարծելու, որ տիեզերական տարածությունում, այդ թվում՝ Լուսնի և այլ երկնային մարմինների վրա Կողմ հանդիսացող մեկ այլ պետության կողմից ծրագրված գործունեությունը կամ փորձը հնարավոր վնասակար խոչընդոտներ կստեղծի տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի և այլ երկնային մարմինների խաղաղ հետազոտման և օգտագործման հետ կապված գործունեության համար, ապա այդ պետությունը կարող է պահանջել այդ գործունեության կամ փորձի վերաբերյալ խորհրդակցությունների անցկացում:

Հոդված X

Տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի և այլ երկնային մարմինների հետազոտման ու օգտագործման ոլորտում միջազգային համագործակցությունը խթանելու համար, սույն Պայմանագրի նպատակներին համապատասխան, Պայմանագրի Կողմ պետությունները հավասարության սկզբունքի հիման վրա դիտարկում են այդ պետությունների կողմից արձակված տիեզերական օբյեկտների թռիչքը դիտելու հնարավորություն ստանալու վերաբերյալ Պայմանագրի Կողմ մյուս պետությունների ցանկացած խնդրանք:

Դիտելու այդպիսի հնարավորության բնույթը և այն պայմանները, որոնցով այդ հնարավորությունը կարող է տրամադրվել, որոշվում են համապատասխան պետությունների միջև՝ համաձայնությամբ:

Հոդված XI

Տիեզերական տարածության խաղաղ հետազոտման և օգտագործման ոլորտում միջազգային համագործակցությունը խթանելու համար Պայմանագրի Կողմ այն պետությունները, որոնք գործունեություն են ծավալում տիեզերական տարածությունում, այդ թվում՝ Լուսնի և այլ երկնային մարմինների վրա, համաձայնում են առավելագույնս իրագործելի և կիրառելի չափով տեղեկացնել Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին, ինչպես նաև հանրությանն ու միջազգային գիտական համայնքին այդպիսի գործունեության բնույթի, իրականացման, վայրի և արդյունքների մասին: Վերոնշյալ տեղեկություններն ստանալուց հետո Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարը պետք է պատրաստ լինի դրանք անմիջապես և արդյունավետ կերպով տարածելու համար:

Հոդված XII

Լուսնի և այլ երկնային մարմինների վրա գտնվող բոլոր արձակման կենտրոնները, կայանները, սարքավորումները և տիեզերական ապարատները հասանելի են Պայմանագրի Կողմ մյուս պետությունների ներկայացուցիչների համար՝ փոխադարձության սկզբունքի հիման վրա: Այդ ներկայացուցիչները պետք է ողջամիտ ժամկետում նախապես ծանուցեն նախատեսվող այցի մասին, որպեսզի հնարավոր լինի անցկացնել համապատասխան խորհրդակցություններ և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ նախազգուշական միջոցները՝ անվտանգությունն ապահովելու և այցելության ենթակա օբյեկտի բնականոն աշխատանքը խաթարելուց խուսափելու համար:

Հոդված XIII

Սույն Պայմանագրի դրույթները կիրառվում են տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի և այլ երկնային մարմինների հետազոտման ու օգտագործման ոլորտում Պայմանագրի Կողմ պետությունների գործունեության նկատմամբ՝ անկախ այն հանգամանքից՝ այդ գործունեությունն իրականացվում է Պայմանագրի Կողմ մեկ պետության կողմից, թե այլ պետությունների հետ համատեղ, ներառյալ այն դեպքերը, երբ այդ գործունեությունն իրականացվում է միջազգային միջկառավարական կազմակերպությունների շրջանակներում:

Տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի և այլ երկնային մարմինների հետազոտման ու օգտագործման ոլորտում միջազգային միջկառավարական կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեության կապակցությամբ առաջացող ցանկացած գործնական հարց լուծվում է Պայմանագրի Կողմ պետությունների կողմից՝ կա՛մ համապատասխան միջազգային կազմակերպության

հետ, կա՛մ այդ միջազգային կազմակերպությանն անդամակցող՝ Պայմանագրի Կողմ մեկ կամ մի քանի պետությունների հետ:

Հոդված XIV

1. Սույն Պայմանագիրը բաց է բոլոր պետությունների ստորագրման համար: Ցանկացած պետություն, որը չի ստորագրում սույն Պայմանագիրը նախքան այն ուժի մեջ մտնելը՝ սույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն, կարող է ցանկացած ժամանակ միանալ դրան:

2. Սույն Պայմանագիրը ենթակա է վավերացման ստորագրող պետությունների կողմից: Վավերացման ու միանալու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարություններին, որոնք սույնով նշանակվում են ավանդապահ կառավարություններ:

3. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում հինգ կառավարությունների, այդ թվում՝ սույն Պայմանագրով ավանդապահ նշանակված կառավարությունների կողմից վավերացման մասին փաստաթղթերն ի պահ հանձնվելու պահից:

4. Այն պետությունների համար, որոնց վավերացման կամ միանալու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո, այն ուժի մեջ է մտնում նրանց կողմից վավերացման կամ միանալու մասին փաստաթղթերն ի պահ հանձնվելու ամսաթվին:

5. Ավանդապահ կառավարություններն անհապաղ տեղեկացնում են բոլոր ստորագրող և միացող պետություններին յուրաքանչյուր ստորագրման ամսաթվի, սույն Պայմանագրի վավերացման և դրան միանալու մասին յուրաքանչյուր փաստաթուղթ ի պահ հանձնելու ամսաթվի, Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվի և այլ ծանուցումների մասին:

6. Սույն Պայմանագիրը գրանցվում է Ավանդապահ կառավարությունների կողմից՝ համաձայն Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 102-րդ հոդվածի:

Հոդված XV

Պայմանագրի Կողմ ցանկացած պետություն կարող է առաջարկել փոփոխություններ կատարել սույն Պայմանագրում: Փոփոխություններն ընդունող՝ Պայմանագրի Կողմ յուրաքանչյուր պետության համար փոփոխություններն ուժի մեջ են մտնում Պայմանագրի Կողմ պետությունների մեծ մասի կողմից դրանք ընդունվելուց հետո, իսկ այնուհետև՝ Պայմանագրի Կողմ մյուս պետություններից յուրաքանչյուրի համար՝ նրա կողմից ընդունվելու ամսաթվից:

Հոդված XVI

Պայմանագրի Կողմ յուրաքանչյուր պետություն կարող է ծանուցել Պայմանագրից դուրս գալու մասին Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մեկ տարի անց՝ գրավոր ծանուցելով ավանդապահ կառավարություններին: Պայմանագրից դուրս գալն իրավական ուժ է ստանում այդ ծանուցումն ստանալու ամսաթվից մեկ տարի հետո:

Հոդված XVII

Սույն Պայմանագիրը, որի անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, իսպաներեն և չինարեն տեքստերը հավասարապես նույնական են, ի պահ է հանձնվում ավանդապահ կառավարությունների արխիվներ: Սույն Պայմանագրի՝ պատշաճ կերպով հաստատված պատճենները ավանդապահ կառավարությունների կողմից փոխանցվում են ստորագրող և միացող պետությունների կառավարություններին:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Պայմանագիրը:

ԿԱՏԱՐՎԱԾ Է երեք օրինակից Լոնդոն, Մոսկվա և Վաշինգտոն քաղաքներում հազար ինը հարյուր վաթսունյոթ թվականի հունվարի քսանյոթին: